



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2279

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԵՔՍԱՆ ԿԻՄԻ ԳԱԼՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսան Կիմի Գալոյանի (ծնված՝ 10.02.1959թ.) լիազորված անձ՝ Ռուզաննա Հայկազի Պապիկյանի դիմումը, 29.04.2022թ. տրված թիվ 1666 (նոտարական ակտի կոդ: 843-20220429-79-5867804) լիազորագիրը, 01.07.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 21.04.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022JCU LBZ), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 28.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-86/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Արուսյան փողոց թիվ 13 հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 314.4քմ մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1953-1992թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 314.4քմ, որից 251.4քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով հավասար բաժիններով, պատկանում է Ալեքսան Կիմի Գալոյանին և Աղասի Լևոնի Մխիթարյանին: Ալեքսան Կիմի Գալոյանի բաժնեմասը կազմում է 188.7քմ (63.0+ 251.4:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ., 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Ալեքսան Կիմի Գալոյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Արուսյան փողոց թիվ 13 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 188.7քմ(63.0+ 251.4:2) մակերեսով հողամասի նկատմամբ:

Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 314.4քմ, որից 251.4քմ մակերեսով հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, պատկանում է Ալեքսան Կիմի Գալոյանին և Արուսյան փողոց թիվ 13 /պայմանական / հասցեի սեփականատիրոջ Աղասի Լևոնի Մխիթարյանին : Ալեքսան Կիմի Գալոյանի բաժնեմասը կազմում է 188.7քմ (63.0+ 251.4:2):

2. Ճանաչել Ալեքսան Կիմի Գալոյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Արուսյան փողոց թիվ 13 հասցեի 188.7քմ (63.0+ 251.4:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Արուսյան փողոց թիվ 13 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Ս. Արուսյան փողոց, 13/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2280

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 63
ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷՍՏԱ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Տարոն Լևիկի Պապյանի 30.09.2025 թվականի թիվ 01/14341 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1739560 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով՝ **որոշում եմ**.

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա թիվ 63 շենքի թիվ 1 հասցեում գտնվող 80.8քմ մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը բնակելիից՝ հասարակական, օգտագործման նպատակը փոխել բնակարանից՝ ատամնաբուժարան:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսությունները և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման մեջ նշված բնակարանը հանել բնակարանային ֆոնդի հաշվառումից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2281

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՍԱՄՎԵԼ ՄԱՅԱԿԱՆԻ ՊԵՊԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Մնացականի Պեպանյանի 11.07.2025 թվականի թիվ 02/9735 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 30.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2564 վկայագիրը /նոտարական ակտի կոդ:763-20250424-84-8951521/, 30.04.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2562 վկայագիրը /նոտարական ակտի կոդ:763-20250424-84-8951517/, 26.02.1987 թվականի տեխնիկական անձնագիրը, «Գասպար Վեքիլյան » ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շինությունների հատակագիծը և շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 26.08.2025 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-208/25-ի եզրակացությունը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 3 հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 346.3 քմ մակերեսով և դրան կից 299,4 քմ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1958-1970 թթ., դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 645.7 քմ :

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սամվել Մնացականի Պեպանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց թիվ 3 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 346.3 քմ մակերեսով և դրան կից 299,4 քմ մակերեսով հողամասի և նրավրա գտնվող բնակելի նշանակության բոլոր

շինությունների նկատմամբ համաձայն՝ «Գասպար Վեքիյան» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2. Ճանաչել Սամվել Մնացականի Պեպանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց, թիվ 3 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տան կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 645.7 քմ մակերեսով հողամասի և նրավրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ համաձայն՝ «Գասպար Վեքիյան » ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Քիմիագործների 2-րդ փողոց, 3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 իուլիտեմբերի 2025 թվականի N 2282

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔԾՀ-3 ԹԻՎ 74/2Գ
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ
ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Բաբկենի Բոնջուկյանի 27.07.2023 թվականի թիվ 02/12620 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1189938 վկայականը, 29 դեկտեմբերի 2004 թվականի Վանաձորի քաղաքապետի թիվ 1263 որոշումը, 30.12.2004 թվականի հողատարածքի վարձակալության թիվ 640 պայմանագիրը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 14.05.2015թ. թիվ 588-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր համայնք, քաղաք Վանաձոր Տարոն-2 ՔԾՀ-3 թիվ 74/2Գ հասցեում գտնվող 0.00391 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔԾՀ-3 թիվ 74/2Գ հասցեում գտնվող 39.1քմ սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 39.1քմ մակերեսով հողատարածքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 29.12.2034 թվականը:

3. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Անդրանիկ Բաբկենի Բոնջուկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 39.1քմ մակերեսով հողամասի վարձավճարի չափը փոխելու, նոր վարձավճար սահմանելու և վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0 քմ համարվճարի չափը ամսական սահմանելով 12 (տասներկու) ՀՀ դրամ, իսկ

աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

4. Վանաձոր համայնք, Վանաձոր թաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թիվ 74/2գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք.Վանաձոր, Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 12/6 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2283

ՍՄՔԱՏ ԲՈՐԻՍԻ ՄԱԼՈՒՄՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի՝ Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 65 շենքի հարակից տարածքում Սմբատ Բորիսի Մալումյանը (անձնագիր՝ AU0530938, տրված՝ 01.12.2021թ., ծնված՝ 12.04.1973թ., հաշվառման հասցե՝ ք. Վանաձոր, Զաքարյան փողոց, թիվ 14/33) առանց թույլտվության ոչ սահմանված վայրում իրականացրել է բացօթյա առևտուր (վաճառում է միրգ, բանջարեղեն), որը համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի հիմքով 24 սեպտեմբերի 2025 թվականին հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա 06 հոկտեմբերի 2025 թվականին իրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Սմբատ Բորիսի Մալումյանը, (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն AL0129719252AM):

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից Սմբատ Բորիսի Մալումյանը 04 ապրիլի 2025 թվականին կայացված թիվ 835 որոշմամբ ենթարկվել է «Վարչական իրավախախտումների

վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության:

Վերոնշյալ հոդվածով նախատեսված արարքը Սմբատ Բորիսի Մալումյանի կոմից կրկին կատարվել է 2025 թվականի ապրիլի 04-ի կայացված որոշումից հետո և այդ իսկ պատճառով վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց թույլվության բացթողյա առևտուր իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա: Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ինսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ

գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 219-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով:

ՈՐՈՇԵՑԻ

1. Տեղում առգրավվել Սմբատ Բորիսի Մալումյանից առևտրի ընթացքում օգտագործվող առարկաները (մթերքները):
2. Սմբատ Բորիսի Մալումյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ:
- 3 Սմբատ Բորիսի Մալումյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2284

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ (ՆԱԽԿԻՆ ՍՎԵՐԴԼՈՎ) 4-րդ ՓԱԿՈՒՂԻ
ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՅԿԱԶ ՍՈՒՐԵՆԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկազ Սուրենի Ամիրխանյանի (ծնված՝ 11.03.1956թ.) լիազորված անձ Արթուր Միքայելի Սուքիասյանի 29.08.2023թ. թիվ 01/14793 գրությունը, 15.10.2011 թվականին ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրված թիվ 1251 արտոնագիրը, 21.05.2021թ. լիազորագիրը, 13.02.1987 թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 12.04.2023թ. ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/4559/02/22 քաղաքացիական գործով վճիռը, հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների եզրկացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման թիվ /260226/ քաղվածքը, «Գասպար Վեքիլյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 17.10.2023 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2023HDKWWJ) տեղեկանքը 21.11.2023 թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-404/23 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Նարեկացու(նախկին Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 353.25քմ և դրան կից 11.45քմ մակերեսներով հողամասերը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1954-1991թթ-ին, բնակելի տան զբաղեցրած սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 364.7քմ:

Դեկլարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Հայկազ Սուրենի Ամիրխանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու(Նախկին Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 353.25քմ մակերեսով հողամասին կից 11.45քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Հայկազ Սուրենի Ամիրխանյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նարեկացու(Նախկին Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 25 հասցեում գտնվող օրինական 364.7քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատկազոտով:

4. Վանաձոր քաղաքի Նարեկացու (Նախկին Սվերդլով) 4-րդ փակուղի թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Գ. Նարեկացու փողոց, 4-րդ նրբանցք, 25/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2285

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1548
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2061 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Գամարնիկի Նալբանդյանի 05.08.2025 թվականի թիվ 02/11025 դիմումը, 05.09.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-05092025-06-0110 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 03 հուլիսի 2025 թվականի «Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 1-ին փողոց 3/1 հասցեում գտնվող Գագիկ Գամարնիկի Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող քոթեջի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1548 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշման 1-ին կետը «միջև» բառերից հետո լրացնել՝ «յուրաքանչյուրին դրա 1/4 մասը՝ 46,55քմ» բառերով և «104,35քմ» բառերից հետո լրացնել՝ «որից 57,8քմ համարվում է Գագիկ Նալբանդյանի սեփականությունը, իսկ դրա 1/4 մասը՝ 46,55քմ, համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 01 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 03 հուլիսի 2025 թվականի թիվ 1548 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 2061 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2286

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
2055 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիլիկ Մանթաշի Բարսեղյանի 19.09.2025 թվականի թիվ 02/13732 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 01 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 2055 որոշումը, 18/09/2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-18092025-06-0186 որոշումը և «Արսեն ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինության բնութագիրը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

Վանաձոր համայնքի ղեկավարի 01 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնքի վարչական սահմաններում» Վանաձոր քաղաքի Թևոսյան 2-րդ փողոց 67բ, 3 (Նարեկացու փողոց 67բ, 3) (պայմանական) հասցեի հողամասի նպատակային նշանակությունը գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, բնակելի տան ու հողամասի նկատմամբ Վիլիկ Մանթաշի Բարսեղյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2055 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:
2. Որոշման 2-րդ կետում «4.75» թիվը փոխարինել «5.65» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2287

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 31 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1819
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԴԵԿԱՎԱՐԻ 17 ՀՈՒՆԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2116 ՈՐՈՇՈՒՄԸ ՈւժԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով Վրեժ Վաշիկտոնի Նահապետյանի լիազորված անձ՝ Արեն Արմենի Պապոյանի 19.09.2025թ. թիվ 02/13723 դիմումը, 31 հուլիսի 2025 թվականի թիվ 1819 որոշումը, 14.04.2025 թվականի թիվ 1752 (Նոտարական ակտի կոդ:843-20250414-90-8922314) լիազորագիրը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը շինությունների բնութագիրը, 18.09.2025 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2025KMF4NR) տեղեկանքը և 15/09/2025 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-15092025-06-0156 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 17 հունիսի 2024 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (Նախկին Ժդանով) 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 10 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Վրեժ Վաշիկտոնի Նահապետյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու եվ փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1819 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում և որոշման մեջ՝ 1-ին կետում «102.9» թիվը փոխարինել «102.7» թվով:
- 2 Որոշման նախաբանում «15.01.2018» թիվը փոխարինել «15.01.2015» թվով:
3. Որոշման նախաբանում «944.9» թիվը փոխարինել «944.7» թվով, ինչպես նաև որոշման մեջ՝ 1-ին կետում «0.09449» թիվը փոխարինել «0.09447» թվով:
4. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով «2. Ճանաչել Վրեժ Վաշիկտոնի Նահապետյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (Նախկին Ժդանով) 1-ին փողոց 2-րդ նրբանցք թիվ 10 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված

անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 842.0 քմ մակերեսով հողամասին կից 102.7 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

5. Որոշումից հանել՝ 3-րդ կետը, 4-րդ և 5-րդ կետերը կարդալ համապատասխան՝ 3-րդ և 4-րդ:

6. Վանաձոր համայնքի ղեկավարի 17 հունիսի 2024 թվականի թիվ 1344 որոշման հավելվածը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

7. Որոշման մեջ՝ «2-րդ» և «3-րդ» կետերը կարդալ հետևալ հաջորդականությամբ, որպես «3-րդ» և «4-րդ» կետեր:

8. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 08 սեպտեմբերի 2025 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 31 հուլիսի 2025 թվականի թիվ 1819 որոշման մեջ փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին» թիվ 2116 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՅՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2288

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱՌԻՐԱ ԺՈՐԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լաուրա Ժորայի Կիրակոսյանի (ծնված՝ 26.12.1957թ.) 26.12.2023թ. թիվ 02/23223 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 26.12.2023 թվականի թիվ 7388 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20231226-66-7584398), 26.12.2023 թվականի թիվ 7387 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20231226-66-75844403), 26.12.2023 թվականի թիվ 7386 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 741-20231226-66-7584412), ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 23.12.2023թ. թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023JE8XHT), «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 27.08.2025թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-209/25 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փողոց թիվ 49 (պայմանական) հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.04000 հա մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.04000 հա:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Լաուրա Ժորայի Կիրակոսյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի 2. Անդրանիկի փողոց թիվ 49 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0.04000 համակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, համաձայն՝ «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱԶ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

2. Հաստատել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի 2. Անդրանիկի փողոց թիվ 49 (պայմանական) հասցեում գտնվող 0.04000 համակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի: Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Զորավար Անդրանիկի փողոց, 33/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2289

ԽՆԱՄԱԿԱԼ ԳՐԵՂԵԼՂԱ ԶՈՒԼՀԱԿՅԱՆԻՆ ԻՐ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՏՂԱՅԻ՝
ԿԱՐԵՆ ՎԱԶԳԵՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 05-Ի
ԹԻՎ 728 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի գրությունը հիվանդանոցային բուժում ստացող անգործունակ Կարեն Վազգենի Ասլանյանի նկատմամբ սահմանված խնամակալությունը դադարեցնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 14-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 26, կետ 7), նաև հաշվի առնելով, որ խնամակալ Գրեգելյա Զուլիալյանը տարեց է, ունի առողջական խնդիրներ և կարողանում պատշաճ իրականացնել խնամակալի պարտականությունները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 41-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով, որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 73 շենքի թիվ 7 բնակարանի բնակիչ Գրեգելյա Զուլիալյանին ազատել իր անգործունակ տղայի՝ Կարեն Վազգենի Ասլանյանի նկատմամբ խնամակալի պարտականությունների կատարումից:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի օգոստոսի 05-ի «Անգործունակ Կարեն Վազգենի Ասլանյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» թիվ 728 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2290

ՆԱՐԻՆԵ ՍԵՅՐԱՆՅԱՆԻՆ ԻՐ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՔՐՈՋ՝ ՄԱՐԻՆԵ ԼԻՊԱՐԻՏԻ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱԴԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 182 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով առողջապահության նախարարության «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի գրությունը հիվանդանոցային բուժման մեջ գտնվող Մարինե Լիպարիտի Ասլանյանի նկատմամբ սահմանված խնամակալությունը դադարեցնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 14-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 26, կետ 6), հաշվի առնելով, որ անգործունակ Մարինե Լիպարիտի Ասլանյանի խնամակալը՝ Նարինե Սեյրանյանը բնակվում է արտերկրում և պատշաճ չի իրականացնում խնամակալի իր պարտականությունները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 41-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հադվածներով, որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Աճառյան (Կասյան) փողոցի թիվ 17 տան բնակիչ Նարինե Լիպարիտի Սեյրանյանին ազատել իր անգործունակ քրոջ՝ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոցի թիվ 12 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Մարինե Լիպարիտի Սեյրանյանի նկատմամբ խնամակալի պարտականությունների կատարումից:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետի 2002 թվականի մարտի 20-ի «Անգործունակ Մարինե Սեյրանյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» թիվ 182 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
Ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2291

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍԻ 10 ՓՈՂ 36
(ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՍԻԼՎԱ ՍԱՐԻԲԵԳԻ ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիլվա Սարիբեգի Ալիխանյանի 26.09.2023թ. թիվ 02/16513 դիմումը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 11.09.2024թ. տրված թիվ 6855 (նոտարական ակտի կոդ: 594-20240910-66-8319932), 11.09.2024թ. տրված թիվ 6854 (նոտարական ակտի կոդ: 594-20240910-66-8319926) և 11.09.2024թ. տրված թիվ 6887 (նոտարական ակտի կոդ: 594-20240910-66-8319908) հայտարարությունները, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՈՌՈՂԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 04.10.2023թ. տրված ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023HGYM2U) տեղեկանքը, 13.11.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 349/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /204533/ քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոսի 10 փող. 36 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.83քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-2009թթ. և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 399.83քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և չափագործվում է սկսած 1990թ-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սիլվա Սարիբեգի Ալիխանյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոսի 10 փող. 36 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.83քմ մակերեսով

հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ,
բացառությամբ 2009թ. կառուցված 25,21քմ մակերեսով զրուցարանի:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված
հատակագծով:

3. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոսի 10 փող. 36 (պայմանական)
հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր
համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամասի 10-րդ փողոց, 40/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2292

ԱՎԵՏԻՔ ԱՐՈՎԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից 24 սեպտեմբերի 2025 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի՝ Ավետիք Արովի Ավետիսյանը (քնակության հասցե՝ ք. Վանաձոր, Չուխաջյան փ. 62, բն. 13, անձնագիր AU0284678) Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 63 շենքի հարակից տարածքում առանց թույլտվության ոչ սահմանված վայրում իրականացնում է բացօթյա առևտուր (վաճառում է ելակ), որը համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի հիմքով 24 սեպտեմբերի 2025 թվականին հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա 06 հոկտեմբերի 2025 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Ավետիք Արովի Ավետիսյանը, (հիմք՝ փոստային առաքման հետադարձ կտրոն AL0129722203AM):

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից Ավետիք Արովի Ավետիսյանը 02 հուլիսի 2025 թվականին կայացված թիվ 1528 որոշմամբ ենթարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության:

Վերոնշյալ հոդվածով նախատեսված արարքը Ավետիք Աբովի Ավետիսյանի կոմից կրկին կատարվել է 2025 թվականի հուլիսի 02-ի կայացված որոշումից հետո և այդ իսկ պատճառով վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության բացոթյա առևտուր իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա: Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ

հողվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հողվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Տեղում առգրավվել Ավետիք Արուի Ավետիսյանից առևտրի ընթացքում օգտագործվող առարկաները (մթերքները):

2. Ավետիք Արուի Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 90.000 (իննսուն հազար) ՀՀ դրամ:

3. Ավետիք Արուի Ավետիսյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 2293

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ
ՆՐԱՎՆՑՔ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՍԵՆԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

